

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատակազմը հայտարարում է աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և պաշտոնական հրատարակման վարչության իրավական ակտերի փորձաքննության բաժնի առաջին կարգի մասնագետի (կոդ 12-4.1-5) թափուր պաշտոնի մասին: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է բարձրագույն կրթություն՝ իրավագիտություն մասնագիտությամբ:

Տվյալ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար կարող են դիմել միայն գործող հավաստագիր ունեցող քաղաքացիները: Դիմող ԼՂՀ քաղաքացիները, հայտարարության հրապարակման հաջորդ օրվանից, տասն աշխատանքային օրվա ընթացքում, ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- 1) քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը.
- 2) գրավոր դիմումը (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս).
- 3) կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները).
- 4) աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում).
- 5) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանքը.
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
- 7) անձնագրի պատճենը:

ԼՂՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատակազմ (հասցեն՝ ք. Ստեփանակերտ, Փետրվարի 20 փողոց, չորրորդ հարկ, հեռ. 94-29-41):

23.09.2013թ.